



Հայկական գիտահետազոտական հանդույց Armenian Research & Academic Repository



Առևտ աշխատանքն արտանագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասուրյան 3.0» արտանագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենը և տարրելն եղուրը ցանկացած ձևաչափով կամ եղիչով
ձեռփոխել կամ օգտագործել առևտ եղուրը ստեղծելու համար եռը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

Արմ. Ըն

ԲԵՆԻԿ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ

206

Բ-49

ԳԻՄՈՒՄ

ՀԱՅ

ՔԱՅԱՆԱՅՈՒԹՅԱՆ

Պետհրատի Ա-րդ տպարան:

ԵՐԵՎԱՆ.

1924.

281.6

8-49

92

ԲԵՆԻԿ, ԵՐ.

Դիմում հայ քահանայուն

Պատճեն

ԲԵՆԻԿ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ

PROGRESSUS

281.6

E - 49



五

1

የኢትዮጵያ

ՀԱՅ

ՔԱՅԱՎՈՒԹՅԱՆ



Պետհրատի Ա-րդ առարկան:

ՏԵՐԵՎՈՒՄ

1924.

Գրառեպիվար № 1294

Քահանա յեղբայրներ.

Հոգուս մեջ կուտակված շատ մտքեր ունիմ, վոր կուղեցի հաղորդել ձեզ, բայց հնարավորություն չունիմ ձեզ բոլորիդ մեկ տեղ տեսնելու. ուստի պարտք համարեցի այս համառոտ թղթով խոսել ձեզ հետ գոնե մի քանի կարևոր հարցերի մասին:

Քրիստոսի Ավետարանը և առաքելական թղթերը՝ հավատացյալներին բարոյապես ղեկավարելու համար, ճանաչում յեն միայն յերեցներ (քահանաներ): Յեպիսկոպոս, քորեպիսկոպոս, վարդապետ անունները, վոր հետո յեն մտել և դասակարգություն ստեղծել, առաքելական դարում մեկ իմաստ ունին. ամեն յերեց յեպիսկոպոս եր, վարդապետ եր. չը կար խորություն, չը կար մեծ ու փոքր, չը կար տեր ու ծառա. բոլորն ել հավասար եյին մի հոր վորդիների նման, յեղբայրների նման հավասար իրավունքներով և նման պարտականություններով:

Յերեցությունն ել վարձու պաշտոն չեր, ցմահ կապանքներ չուներ, այլ ազատ կոչումն. և այդ ազատ կոչման մեջ նա ավելի լավ եր ապրում, քան վարձու պաշտոնյան:

Յերբորդ դարում աշխարհիկ իշխանության կազմակերպության ձեռվ և նրա ազդեցությամբ, Ավետարանի վոգու հակառակ կազմվեց հոգեստ նվիրապետություն աստիճաններով, դասակարգերով, հրամաններով և հղանդությամբ և համապատասխան տիտղոսներով «Նորին Սրբություն», «Նորին Բարձր Սրբազնություն», «Նորին Գերաշնորհություն» «Նորին Սրբազնություն» «Նորին Բարձրապատվություն», «Նորին Արժանա-

պատվություն»։ Քահանային կոչեցին «Նորին Բարեկը կրոնություն»։

Ի՞նչ եք կարծում, ի՞նչ կանելին առաջալները, յեթե Քրիստոսը համաձայներ խոստանալ Զերեթիայի վորդիներին՝ Հակոբոսին և Հովհաննեսին, նրանց մոր ինդրանքով, բարձր աթոռները տալ իր մոտ, իր թագավորության մեջ։ Անշուշտ կասելին՝ եղ ի՞նչ ես անում, վարդապետ, մենք ես անիրավ աշխարհի տիրող ու տանջող մեծերից ազատվելու համար թողինք մեր ձկնորսությունն ու յեկանք քո յետեկից, հրապուրվելով քո խոստումով թե՛ քո թագավորության մեջ հավասարություն և արդարություն կը լինի. այժմ դու Ել ես ուզում մեծ ու փոքր, տեր և ծառա ստեղծել. վոր եղակես ե՞ւ մենք կը գնանք մեր ձկնորսության։

Անշուշտ այսպես կասելին և կանելին։

Ի՞նչ եր անում Հիսուսը՝ դուք բոլորդ հավասար եք. անմիտ ե նա, ով կամենում ե մեծ լինել այս աշխարհի իմաստով, ով վոր կամենում ե իմ թագավորության մեջ մեծ լինել, նա ամենքին պիտի ծառայի։

Հակառակ Քրիստոսի այս մեծ գաղափարի, քրիստոնեական յեկեղեցին ստեղծեց կենդանական իշխանություն բարձրադիր աթոռներով, վորին ստրկական ծառայությամբ յենթարկվեց յերեցությունը, այն կոչմանավոր յերեցությունը, վորի վրա յե կանգնած կենդանի յեկեղեցու, ժողովրդի հավատը։

Հոգևոր կենտրոնական իշխանության լուծը հետրզնետե ծանրացավ քահանայության վրա, կազմվեցին ստրկացնող որենքները և նա տարավ այդ ստրկական վիճակը հակառակ իր կոչման և սովորությամբ հաշտվեց դրության։ Նա այլև ազատ առաքյալ չեր, այլ կամակատար ծառա հոգևոր չինովնիկության։

վերջին մի քանի տասնյակ տարիներում հայ քահանան իր բարոյական ու նյութական կացությամբ ամենաարհամարելի դասն յեղավ հոգևոր վերին դասերի առաջ:

Ո՞վ ե ձեզնից այն բախտավորը (բացի կոնսիստորիայի անդամներից, վոր առաջնորդների աչքերն են ու ձեռքերը միայն ձեր թերությունները տեսնելու և ձեզ ճնշելու համար), վոր մի քաղցր վերաբերմունք տեսած լինի, մի մարդավարի խոսք լսած լինի հոգևոր իշխանավորներից, յեթե դատարկ ձեռքով եք ներկայացել: Հավատացած եմ վոչ վոք:

Դուք՝ ժողովրդի հետ ձուլված քահանաներ, միայն մոռացության, արհամարանքի հանդամանք ունեք այդ իշխանության առաջ:

Միթե չեք հիշում թե ինչպես որերով, ժամերով քարշ եք յեկել յեպիսկոպոսների դռներում, վոր ձեզ ընդունեն ձեր դարդը լսեն. միջնորդներ եք ձրգել կոնսիստորիայի հպարտ անդամներին, կամ յեպիսկոպոսի ծառայի բուռը մի բան եք ոլլացրել, վոր հաջողի ձեզ դողեղող ներկայանալ:

Ձեր այդ ընդհանուր դրության պատկերը ձեր առաջը դնելու համար հարյուրավոր դեպքերից մեկը՝ մի որինակ պատմեմ մի քահանայի պատմած:

«Շատ աղքատ եմ, մուրալ ամաչում եմ. ժողովուրդն արդյունք չի տալիս, տերտերությունն ինձ ես որի հասցրեց: Մեկ որ կնոջս ասացի՝ այ տիրուհի յերեք գրվանքա յուղ ունինք և մեկ հավ. արի դու հավը կարմրացնենք, յուղն ել վերցնենք յես ու դու գնանք սրբազնի մոտ: Կինս հավը գրկեց, ես ել յուղը. դեպատարկ ձեռքով իշխանավորին ներկայանալ չի լինում: Գնացինք վոր իմ ու կնոջս մերկությունը աչքով տեսնի: Իմ քահանա լինելս յերեսում եր միայն մի

ցնցոտի գլխարկից. մնացած շորս բանվորի ցնցոտի յեր: Գնացել եյի վոր խնդրեմ հայ տերտերների համար Անգլիայից ստացված քառասուն թեռ կտորներից մի վերարկացու տա, վոր քուրջերս ծածկեմ:

Նստանք դուռը. յեկան ու գնացին, գնացին ու յեկան՝ կին մարդ, աղջիկ, ծառա. մենք նստած ենք ժամերով. կոնսիստորի անդամին են հայտնել խնդիրս. վերջը գլուխդ ինչ ցովացնեմ, կոնսիստորի կոկիկ հագնված անդամը դուրս յեկավ ըղավեց վրես, դուրս գնացեք, բոլ չենստեք մթոռուպի պես, կտոր չը կա: Ամոթահար, խայտառակված, վեր կացանք ընկանք ճամբա, անիծելով են որը վոր տերտեր յեղա»: Յեղբայրներ, դուք սրանից ել ավելի սրտաճմլիկ որինակներ գիտեք. բայց մի քանիսն ել բերեմ:

Գնում եմ լեռնային ճանապարհով. հեռվում նկատում եմ մի ճամբորդի, քայլերս արագացնում եմ, վոր հասնեմ ու խոսակից զտնելով մենակության ձանձրույթս փարատեմ: Հասա. գըզգըզված հագուստով, տրեխները ծակ, մատները դուրս ընկած մեկն և ճամբորդը, միայն գլխին քահանայական գլխարկի խոնացած, քրտինքի կեղտով փայլուն մի գլխարկ կա: Բարե տվի. տերտեր ես, հարցըրի: Հա, տերտեր եմ, բայց տերտերությունիցս մնացել ե միայն ես գլխարկի կտորը, ախ քաշելով պատասխանեց ջահել տերտերը. հիմի խոկապես մշակ եմ, գնացել եյի արան հունձ անելու, վոր մի քանի լիտր ցորեն աշխատեմ յերեխաներս պահելու համար: Յես շատ ապահով յերիտասարդ եյիւլավ յերկրագործ. տերտերի թոռ եյի, ստիպեցին թե, քահանայից ցեղ ես՝ դու տերտեր յեղիր: Յերեք տարի գնացի ու յեկա գործիս համար՝ գործակալին, սինող, կոնսիստոր: Ծախսեցի յեղներս, կովերս, բոլորը տվի

նրանց, վերջապես տերտեր յեղաւ Հիմի ել ապրուստ չունիմ, ժողովուրդը տուրք չի տալիս, Եջմիածինն ել իսկի չի հարցնում թե տերտերներս ապրում են թե մեռնում: Ահա եսպիսի տերտերներից մեկն ել ես եմ:

Մի ուրիշ քահանա՝ Ալիքուչակ գյուղից, դառն աղքատության յերեսից ենքան բանեց Սարդարապատում, վոր ուժասպառ յեղավ, վերադարձավ ու իսկույն մեռավ, սովի գրկում թողնելով իր յերեխաներին:

Մի յերկրորդ, վոր ուսել ե ձեմարանում մինչև վեցերրորդ դասարան, այսոր շրջում ե ցնցոտիների մեջ, վոր ծածկված են հին գյուղական ռեսների կապույտ պալտոյի հնոտիով ու զարդարված ե փայլուն կոճակներով, իր դարդն ե լավիս. «առաջ քահանա եյի և ուսուցիչ. վերջինս բովանդակության եր տալիս իմ գոյության, ոռճիկն ել բավարար եր, ապրում եյի. այժմ վոչ ժողովրդից ոգուտ կա, վոչ ուսուցչություն: Հոգուտ մեջ ել մի կոխիվ կա. ախր շատ ծես վոր կատարում եմ, չեմ հավատում, կեղծիք եմ անում ու ինձնից ամաչում. զե ես մեր վարդապետ յեպիսկոպոսներին ել գիտեմ, նրանք ել չեն հավատում. բայց նրանց անհավատ արարքը ազգը առատ վուկով ե վարձատրում, իսկ մեր վեշակը՝ վոր նույնն ե, մեզ դառն աղքատություն ե բերում:

Մի որ տղես ասաց. հայրիկ, յես ուզում եմ կոմսումով դառնամ, միտք արի ու պատասխանեցի, գնա, վորդի. գնա ժողովրդի հետ, մենք ել ժողովուրդ չունենք: Յես ել մտածում եմ վերարկուս հանեմ, վարժապետ դառնամ, թե չե ախր իսկի բանի պետք չեմ ու քաղցած, բա մեղք չեն իմ յերեխաները»:

Այսպես արհամարդած եք դուք, քահանա յեղբայրներ ու այսպես խեղճ: Մի բացառություն կարող եք ցույց տալ միայն. այդ ձեր ձեռնադրության նախորդ

որն ե, յերբ վոսկի եք համրել սրբազան հայրերի
առաջ, յերբ ձեզ սիրով են վերաբերվել և կամ յերբ
ներկայացել եք բեռներով:

Ինչպես ցավում եմ, վոր մոռացել եք զիտակցել
ձեր կոչումը, ձեր պատիվը:

Ախր դուք եք, վոր ձեր ժողովրդից հավաքել եք
յուղ, պանիր, պտղի, աթոռահաս, հոգեբաժին, մատաղա
ցու կով, վոչխար, զառ, ձու և հազար տեսակ՝ նվերներ
այս ու այն պատրվակով, վոր ձեր իշխանությունը
կուշտ ու կուռ ապրի, իսկ դուք ապրել եք հողագործի
չարքաշ կյանքով և ժողովրդի կամավոր տուրքով,
վոր այժմ փոխվել ե անտարրերության և արհամա-
րանքի:

Դուք ուրեմն ի՞նչ եք յեղել. միայն հոգեոր հար-
կահաններ հոգեոր պետերի համար, վորոնք առատու-
թյան յեղջուրից վայելել են առանց ճակատ քրտնեց-
նելու, իսկ դուք մնացել եք միշտ աղքատ և արհամար-
ված: Ի՞նչ եք կարծում այսպես և յեղել Քրիստոսի և
իր աշակերտների հարաբերությունը: Ի՞նչ կանելին
առաքյալները, յերբ Քրիստոսը առատության մեջ
ապրեր, իսկ աշակերտներին քաղցած թողներ: Յես
գիտեմ ինչ կանելին. նրանք՝ վոր ազնիվ ըմբոստա-
ցումով աշխարհի հզորների անարդարության դեմն յե-
լան, կըմբոստանային իրենց վարդապետի դեմ և կա-
սելին՝ դու, արդարության քարոզիչ, անարդարու-
թյունն ես գործում, մենք քեզ չենք ճանաչում:

Ձեր այժմյան տնտեսական վիճակը, յեղբայրներ,
ծանրանում ե սրտիս վրա. ձեր քահանայապետներն
ու ղետացիները ձեզ համար «վողորմած սամարացին»
չեն, այլ վիրավորող և ճանապարհի վրա ձգող անցնող:

Եղ զրկանքի և արհամարանքի փոխարեն դուք
գոնե վորեն բան սովորել եք, ուսե՞լ եք ձեր իշխանա-

վորներից. հավաքել են ձեզ, հետաքրքրվել են ձեզնով
ու ձեր ժողովրդով. յեկել են ձեզ ու ձեր հոտին այցե-
լության. Զեր ժողովուրդը, վոր գյուղից դուրս չի յե-
կել, վեղար տեսնել ե. վո՞չ: Բայց դուք գիտեք, վոր
հին դարերում կաթողիկոսներն անգամ անձամբ շըր-
ջում եյին և քարոզում և ուսուցանում:

Պարզ ե ուրեմն, վոր վոչ մի կապ չը կա ձեր,
ժողովրդի և հոգևորականության մեջ, բացի նյութա-
կան կապը, վորի քաղցրությունը միայն վերինն է
վայելում:

Զեզ առաջնորդներ են տալիս. ախր դուք վոչ
մի ձայն չունեք, վոր կարողանաք ասել, այս առաջ-
նորդը մեզ անհարմար ե, մեր ցանկացածը տվեք: Յեվ
դուք գեռ պարտավորվում եք այն բոլոր այլանդա-
կությունները տանել, ծածկել, ինչոր ձեր առաջնորդ-
ների անձն և ստեղծում: Զայն ել հանեք ձեր պա-
տիվը պատիժն ե:

Այդպիս չե՞, ուղիղն ասեք, ձեր խղճմտանքին
հարցրեք:

Այս վիճակը լքումն ե փոել ձեզ վրա. չը կա
այսոր մի քահանա, մանավանդ գյուղերում, վոր չա-
նիծի այն որը, յերբ ցմահ քահանայության դա-
տապարտվեց և զրկվեց թե բարուական ազատու-
թյունից և թե հալալ աշխատանքից:

Հոգևոր բարձր իշխանությունը իր անպարտա-
ճանաչության շնորհիվ, իր մեկուսացման մեջ իրա-
պիս բաժանվել ե ձեզնից ու ժողովրդի զանգվածից և
այդ պատճառով ժողովրդի կապը կրոնական կյանքի
հետ կտրվել ե:

Ճշմարիտ չե՞, որինակ, վոր վոչ մի մտավորա-
կան, ինտիլիգենտ համարված մարդ իր ամրող կյան-

քում ձեր ժամը չի մտել և չի հաղորդվել: Ուրեմն մտա-
վորական դասի մեջ դուք ժողովուրդ չունեք:

Ճշմարիտ չե վոր այժմյան ջահել սերունդը վոչ
ձեզ ե ճանաչում, վոչ յեկեղեցին: Ուրեմն դուք գա-
լիք որերում ժողովուրդ չեք ունենա: Մնում են ձե-
րերն ու վշտացած հարուստները, վորոնց ժամ գալը
չի բղխում կրոնական զգացմունքից, համոզմունքից,
այլ կողմնակի, անցողական հանգամանքներից և ձե-
րության պարապ սովորությունից: Ախր նրանք ել
իրենց վայելքի որերում յեկեղեցի չեյին գալիս:

Եղ մասն ել լիքն ե ավելի շատ սնոտիապաշտու-
թյամբ, քան քրիստոնեյական գաղափարների վոգեռ-
ությամբ, վորին ծանոթ ել չե: Սնոտիապաշտու-
թյունը կայուն բան չե. այդ մի խավար ե, վոր շու-
տով կը չքանա զիտակցության և զիտության լույսի
առաջ: Ուրեմն դուք կը զրկվեք և այդ աղոթավորնե-
րից: Ժողովուրդն իր ճամրով կերթա և դուք՝ ձեր.
ձեր ճամրեն անդունդով ե վերջանալու:

Հենց այժմ դուք յերգեցող չունիք, տիրացու չու-
նիք, դուք մենակ թե քահանա եք, թե տիրացու թե
ժողովուրդ: Ճիշտ չե:

Մի հարցրու թե ինչու այդպես յեղավ: Շատ պարզ
պատճառով. վորովհետեւ յեկեղեցին, վոր միշտ ժողո-
վրդի հետ ե յեղել հնումը. այժմ իր ամրողջ կառուցու-
մով, իր հինցած ու այժմյան մտքին բան չասող ձե-
սերով հետ ե ընկել, դարձել ե կեղծիք: Յեկեղեցու վե-
րին շերտերը ապականել են իրենց պղծություններով,
կեղծիքով, գողությամբ, հղիացումով, ծուլությամբ:

Մարդիկ իրենց բանականությանը հակառակ բա-
նին չեն հավատում:

Ի՞նչ եք անում դուք, յերբ ձեր հինցած տունը
փլշելու վրա ե. խո չեք թողնի, վոր Փլշի ձեր զլիսին.

վոչ, դուք քանդում եք հինը, փթածը և նորն եք կառուցանում ավելի լավ ձեռվ։

Յեկեղեցին ել եղագես և, հինը նորով պետք և փոխվի։

Եզ նորի հիմքը պետք է լինի նօմարտուրյունը, արգարուրյունը, լույսը, հավասարուրյունը, սերը. ահա ինչ վոր ավետարանական է յեզ անմահ։ Ինչ վոր կեղծիք է, այն գուրս պետք է ձգվի թե դավանանից, թե վարչականից, թե ծիսականից, թե կենցաղականից։

Ովքեր են կազմակերպել հինը, վոր մի ժամանակ նոր ե յեղել. ձեզ նման քահանաներ, վոր ձեզնից ավելի լուսավոր չեցին. ինչու դուք այժմ չեք կարող վերակազմել միայն ավետարանի հիմունքով։

Հին յեպիսկոպոսները այսպիսի պատժական որենքննը ել ունին քահանաների և ժողովրդի վերաբերությամբ. ծեծել, աղվեսագրուշմ դնել ճակատին, ջիւերը կըտրտել, բանտարկել և այլն։

Այդ որենքնները պաշտոնապես փոխված չեն. բայց չը կան։ Ռւբեմն ամեն հինը լավ չե և փոխելը անհրաժեշտ։

Դուք սրա վրա մտածեցեք և պահանջ դրեք յեկեղեցական ժողով գումարելու, ուր անելիքներ կը պարզվին։

Մտավախությունը մի կողմ դրեք. թե հինը քանդենք, նորը չենք կարող շինել. միենույն և հինը անխուսափելիորեն քանդվելու և, յեթե դեռ չի քանդվել։ Յեթե հայ ժողովրդին պետք է յեկեղեցի. նա իր ուղած ձեռվը կը շինի. իսկ յեթե պետք չե, չի կամենա, թող չը շինի։

Դուք ժողովրդի հետ ձույլ մնացիք. ձեր կյեանքի

նպատակը դարձրիք ժողովրդին ծառայելը, ինչպես
վոր Ավետարանն է պահանջում:

Մի քարոզեք այն, ինչի վոր դուք չեք հավա-
տում և չեք կատարում. մի քաջալերեք սնոտիապաշտու-
թյունը մի քանի կոպեկի համար, այլ ցրեցեք նախա-
պաշարմունքները, ժողովրդի բարեկեցության գործին
աջակցեցեք խոսքով և անձնական որինակով:

Մեր յերկիրն իր մոխրակույտից հարություն և
առնում, վերաշինվում է. չեք կարող աչք փակել,
խղճմտանք ծալել, վոր հսկայական ջրանցքներ են կա-
ռուցվում հսկայական անջրտի հողեր վոռոգելու համար,
դպրոցների ցանցով կապվում յեն իրար հետ գյուղու
քաղաք, ճանապարհներ են շինվում, ելեքտրական
լույսերն են ընդարձակվում, հիվանդանոցներն են
բաղմանում, համալսարաններ են ստեղծվում, գրադա-
րաններ են հիմնվում ու ճոխանում աճող գրքերով և
այլն:

Վերաշինվող հայրենիքի վերաշինողներին, ով
կուղե լինի, սրտով ոգնեցեք և քաջալերեցեք անխար-
դախ կերպով:

Ով կը հանդիսանա մեր խեղճ յերկրի համար
«վողորմած սամարացի» նա մեր հարգանքին և արժա-
նի և աջակցության: Այդ և իսկական քրիստոնեյի
պարտքը:

Պահեցեք ձեր այս հավատը թե բարի, ժողովր-
դաշահ խոսքն ու նրա գործադրությունը, վոր բղխում և
սիրուց, հրաշք կը գործեն. և այդ տեսակ հրաշքի մեջ
կը բարձրանաք դուք և ժողովրդին սիրելի կը դառնաք,
վորովհետեւ նրա հետն եք. և դուք քաղցած չեք մնա:

Այլապես ձեր վերարկուն նախատանքի վերարկու-
կը մնա և ձեր բաժինը դառն հիասթափությունն և
և ծանր զղջումը:

Յեթի այդ վերարկուն նախատական և և ձեր ներ
քին մարդը բողոքում և նրա դեմ ու դուք նրա մեջ
հարություն առնել, վերափոխվել չեք կարող, հանցեք.
թող վերարկուն և շքեղ զգեստը հագնեն նրանք, վո-
րոնք արտաքին փայլով մի ապականված հոգի և մար-
մին են ծածկում. Մի փախենաք, դուք նրանցից բար-
ձը կը մնաք:

Դուք գիտեք, վոր Եջմիածնի ամենաընտիր վար-
դապետները վերարկուն հանցին ու գնացին դեպի
մայր ժողովուրդը, բայց նրանք միշտ բարձր մնացին
ձեզ տիրող յեպիսկոպոսներից: Նրանք մի հանցանք
ունին, վոր անձայն գնացին. բայց այդ ել մեղմա-
նում և այն հանգամանքներով, վոր նրանք չեյին կա-
րող ձայն հանել, վորովհետեւ Սինոդը կը գրեր նահան-
գապետին և վերջինս նրանց բանտը կը տաներ: Խո-
պատմական որինակներ ունինք, վորոնք ցույց են
տալիս թե հրապարակում և ականջե ականջ ազատու-
թյուն շնչացող և բռնության դեմ բողոքող Սինոդը
ինքը Քրիստոսի մարդուսիրությանը և բոլոր ավանդ-
ներին դավաճանելով, ամենապաժան բռնություններն
և գործ դրել:

Չեզ մեկն յիշեցնեմ. 1850-ական թվականներին
տեղեկանում են, վոր Արխվալի գյուղում մի քանի
տուն թոնղրակեցիք կան, վորոնք յեկեղեցու ծես, ա-
րարողություն չեն ճանաչում: Սինոդը բողոքում է նա-
հանգապետին: Նահանգապետը նրանց բանդն է լցնում.
Սինոդը այդ պատճով չի բավականանում. դիմում ե
նորից նահանգապետին և պահանջում վոր նրանց մահ-
վան պատիժ տան:

- Մեր սրբազանների դաժան անդիմությունից և
բռնությունից շատ ժամանակ չե, վոր յերկու թուլա-
կամ ջահել վարդապետներ պարանով կախվեցին ու

Խեղդվեցին. մեկը Եջմիածնում իր խցում, մյուսը
Մուղնու վանքում:


Մի վախենաք նրանցից, ձեր մարմինն են սպա-
նում սովով. այլ վախեցեք նրանից, վոր ձեր հոգին ու-
ու մարմինն իրար հետ զեհենն են ձգում. և ինչ ե-
այդ զեհենը, յեթե վոչ ձեր հոգու հակառակությունից,
առաջ յեկած տանջանքը, խղճահարությունը, ամո-
թանքը, վոր ուղեք չուղեք պիտի տեսնեն, զգան և ու-
րիշները:

Քաջացեք, քահանա յեղբայրներ, գոտեորվեցեք
Հիսուսի ճշմարտությամբ և արդարությամբ, հարու-
թյուն առեք թմրությունից, լցվեցեք առաքելական
խանդավառությամբ և պահանջեցեք ձեր յեկեղեցուց,
ձեր իշխանությունից, ձեր նյութական խեղճության
բարեփոխություն, պահանջեցեք նրանից հոգիների
վրա բռնանալու վերացումն, պահանջեցեք կենդանի
գործ հոգուտ ժողովրդի, պահանջեցեք վերջ տալ ավե-
րին ու թալանին, կաշառքին ու պղծության, պահան-
ջեցեք փուած հնի վերացումն, պահանջեցեք յեկեղե-
ցական-ազգային ժողով:

Ձեր այս արդար պահանջներին և հայ ժողովրդի
կրոնական լուսավորությանը ընդառաջ կզա և ձեզ
կաջակցի սիրով:

ԱԿԱՐԵՍ. 181





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0062260

-301c]

A-T
18514

Գիրք 10 կոպ.

Դիմել գրավաճառներին: